

Հայ-ռուսական համալսարանի ՀՀ ԲԿԳԿ-ի
իրավագիտության 063 մասնագիտական խորհրդին
(Հասցե 0051, Հայաստանի Հանրապետություն,
ք. Երևան, Հովսեփ Էմինի փողոց, 123)

ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Ռոզա Ամիրի Ամիրովայի՝ ԺԲ.00.03 – Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային, միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային իրավունք, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար ներկայացված «Բանկային ծառայությունների ոլորտում սպառողների իրավունքների քաղաքացիաիրավական պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

1. Ատենախոսության թեմայի արդիականությունը

Բանկային ծառայությունների ոլորտում սպառողների և բանկերի միջև հարաբերությունների իրավական կարգավորման համալիր վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ գործող նորմերը դեռևս հեռու են կատարյալ լինելուց: Իրավական անորոշությունները հաճախ խոչընդոտում են միատեսակ և արդյունավետ իրավակիրառ պրակտիկայի ձևավորմանը: Սպառողի՝ որպես իրավահարաբերության «թույլ կողմի», իրավունքների պաշտպանությունն ունի առանցքային նշանակություն, ինչը թելադրում է կողմերի շահերի հավասարակշռմանն ուղղված օրենսդրական բարեփոխումների իրականացման անհրաժեշտություն:

Հարկ է նշել, որ արդի իրավագիտության մեջ դեռևս բացակայում է բանկային ծառայությունների ոլորտում սպառողների իրավունքների պաշտպանությանը նվիրված համակարգային և ամբողջական հետազոտություն: Նախկինում կատարված աշխատանքները հիմնականում սահմանափակվել են առանձին ասպեկտների

ուսումնասիրությամբ, մինչդեռ ոլորտային բազում հիմնախնդիրներ շարունակում են մնալ չհետազոտված կամ գիտական բանավեճի տիրույթում:

Հայեցակարգային և գործնական բնույթի բազմաթիվ բարդ հարցեր են հարուցում «բանկային գործունեություն» և «բանկային ծառայություն» հասկացությունների իրավաբանական բովանդակության տարամեկնաբանումները: Վարկառուների իրավունքների խախտումների հաճախականությունը, հատկապես՝ վարկային պարտավորությունների վաղաժամկետ կատարման իրավական հետևանքների համատեքստում, հրատապ է դարձնում սույն ոլորտը կարգավորող օրենսդրական նորմերի համակարգային բարեփոխման հարցը:

Հետազոտության մեջ իրավացիորեն մատնանշվում են բանկային ավանդի իրավական բնույթի սահմանմանը վերաբերող դոկտրինալ հակասությունները (եջեր 51-54, 56): Հատուկ հետաքրքրություն են ներկայացնում ատենախոսության մեջ արձարծված հետևյալ հիմնախնդիրները. ցպահանջ ավանդների տոկոսների հաշվարկման կարգը, ժամկետային ավանդներից միջոցների մասնակի դուրսբերման դեպքում տոկոսագումարների վերահաշվարկի մեխանիզմները, հաշիվների սպասարկման դիմաց միջնորդավճարների գանձման իրավաչափությունը, պայմանագրային դրույթները բանկի կողմից միակողմանի փոփոխելու իրավական սահմանների և սպառողի պատշաճ իրազեկման երաշխիքների հարաբերակցությունը:

Անկանխիկ հաշվարկների ոլորտում զեղծարարության դեպքերի աճը և միջազգային պատժամիջոցների ազդեցությունը ոչ միայն վտանգում են սեփականության անձեռնմխելիության սկզբունքը, այլև նվազեցնում հանրային վստահությունը ֆինանսական համակարգի նկատմամբ: Աշխատանքի գիտական արժեքը մեծանում է նաև սպառողական իրավահարաբերություններում ոչ նյութական վնասի ինստիտուտի վերլուծությամբ, որը մինչ օրս հայրենական իրավագիտության մեջ դեռևս բավարար լուսաբանում չի ստացել (եջեր 121-128):

Հեղինակի կողմից առաջադրված հայեցակարգային մոտեցումները՝ ուղղված ֆինանսական համակարգի հաշտարարի ինստիտուտի գործունեության օպտիմալացմանը (եջեր 145-158, պաշտպանության ներկայացվող 7-րդ դրույթ), ինչպես

նան սպառողների՝ դատական պաշտպանությանն ուղղված առաջարկները (էջեր 159-165, պաշտպանության ներկայացվող 8-րդ դրույթը) կարող են էականորեն բարձրացնել վեճերի լուծման մատչելիությունն ու արդյունավետությունը:

Այսպիսով, Ռոզա Ամիրի Ամիրովայի ատենախոսական հետազոտության թեմայի արդիականությունը վերոնշյալ հիմնավորումների համատեքստում կասկած չի հարուցում և պայմանավորված է բանկային ծառայությունների ոլորտում սպառողների իրավունքների քաղաքացիաիրավական պաշտպանության ինստիտուտի օրենսդրական կարգավորման ոչ լիարժեքությամբ:

2. Հետազոտության իրականացումը և արդյունքները

Ատենախոսության թեմայի ընտրությամբ հեղինակը նպատակ է հետապնդել վերլուծել առավել պահանջված բանկային ծառայությունների մատուցման ընթացքում սպառողների քաղաքացիաիրավական պաշտպանության գործող կառուցակարգերը, վեր հանել ոլորտի օրենսդրական բացերն ու հակասությունները, մշակել օրենսդրության կատարելագործմանն ուղղված հիմնավորված և կիրառելի առաջարկներ:

Ատենախոսությունը կառուցված է տրամաբանական հաջորդականությամբ, ինչը հեղինակին թույլ է տվել համակողմանիորեն լուծել առաջադրված հետազոտական խնդիրները: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, տասներեք պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության գիտական նորույթն արտահայտվում է բանկային ծառայությունների ոլորտում սպառողների քաղաքացիաիրավական պաշտպանության կառուցակարգերի համալիր հետազոտությամբ և հայեցակարգային նոր լուծումների առաջադրմամբ:

Աշխատանքի հիմնական արժանիքները վկայում են հեղինակի՝ գիտական հետազոտության առարկան ճշգրիտ սահմանելու, թեմայի վիճահարույց ասպեկտների նկատմամբ ինքնուրույն մոտեցում ցուցաբերելու, ինչպես նաև տեսական գրականությունը, նորմատիվ իրավական հիմքերը և դատական պրակտիկան համադրված վերլուծության ենթարկելու հմտության մասին: Հետազոտության հավաստիությունն ու գիտական հիմնավորվածությունն ապահովվել են օտարերկրյա դոկտրինալ աղբյուրների, միջազգային-իրավական փաստաթղթերի, օրենսդրական

ակտերի, ՀՀ ու միջազգային դատական ատյանների նախադեպային իրավունքի լայնածավալ ուսումնասիրությամբ:

Ներածությունում հեղինակը հիմնավորել է թեմայի արդիականությունը, մշակվածության աստիճանը, տեսական, նորմատիվ և փորձառական հիմքերը, մեթոդաբանությունը, օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, ձևակերպել պաշտպանության ներկայացվող դրույթները, տեսական ու գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը:

Ատենախոսության՝ «Քաղաքացիներին մատուցվող բանկային ծառայությունները» վերտառությամբ առաջին գլխում հեղինակը քննության է առել «բանկային գործունեություն» և «բանկային ծառայություն» հասկացությունների վերաբերյալ դոկտրինալ և օրենսդրական մոտեցումները, առաջարկել հեղինակային սահմանումներ (էջեր 18-24), ուսումնասիրել սպառողական բանկային ծառայությունների դասակարգումը (էջեր 24-27), իրավական կարգավորումը օտարերկրյա համակարգերում (էջեր 27-36):

Հատկապես արժեքավոր դիտարկումներից կարելի է առանձնացնել հետևյալը.

- Հիմնավորվել է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում առկա «բանկային գործունեություն» հասկացության սահմանման կատարելագործման անհրաժեշտությունը: Առաջարկվող հեղինակային սահմանումը, որը դիտարկում է բանկային գործունեությունը որպես ֆինանսատնտեսական ձեռնարկատիրության յուրահատուկ տեսակ՝ ուղղված շահույթի ստացմանը և հաճախորդների կարիքների բավարարմանը, կարող է ապահովել օրենքի միատեսակ մեկնաբանությունն ու իրավակիրառ պրակտիկայի արդյունավետությունը: Միաժամանակ հեղինակի կողմից տարբերակվել են «բանկային ծառայություն», «բանկային պրոդուկտ» և «բանկային գործառնություն» հասկացությունները՝ շեշտադրելով ծառայության՝ որպես ընթացակարգային համակցության լայնածավալ բնույթը (էջեր 18-24, պաշտպանության ներկայացվող 1-ին դրույթ):

«Բանկային ծառայությունների ոլորտում իրավախախտումները և սպառողների իրավունքների պաշտպանությունը. խնդիրներ և օրենսդրական լուծումներ»

վերտառությամբ երկրորդ գլխում հեղինակը իրականացրել է կոնկրետ իրավախախտումների վերլուծություն և առաջարկել լուծումներ՝ հիմնական բանկային ծառայությունների կարգավորող օրենսդրության և դատական պրակտիկայի առանձնահատկությունների համատեքստում (էջեր 38-107):

Տվյալ գլխի շրջանակներում հեղինակը կատարել է մի շարք արժեքավոր եզրակացություններ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները.

- Արժեքավոր է վարկի վաղաժամկետ մարման դեպքում սպասարկման վճարների համաչափ նվազեցման մեթոդաբանությունը և բանկային հաշվի պայմանագրի պայմանների փոփոխման դեպքում հաճախորդի համաձայնության անհրաժեշտության հիմնավորումը (էջեր 38-49, պաշտպանության ներկայացվող 2-րդ դրույթ):

- Աշխատանքը կարևոր և կիրառելի դրույթներ է պարունակում բանկային ավանդի պայմանագրի բացառապես հատուցելի բնույթի դոկտրինալ մակարդակով հիմնավորման մասով (էջեր 51-59, պաշտպանության ներկայացվող 3-րդ դրույթ):

- Առանձնահատուկ ուշադրության են արժանի հեղինակի դատողությունները ֆինանսական կազմակերպության և սպառողի միջև կնքված բանկային հաշվի պայմանագրի պայմանների փոփոխման դեպքում հաճախորդի համաձայնությունը ստանալու անհրաժեշտության վերաբերյալ (էջեր 62-72, պաշտպանության ներկայացվող 4-րդ դրույթ):

- Հաշվետերերի պաշտպանության տեսանկյունից կարևոր անդրադարձ է կատարվել հաճախորդի՝ քարտը արգելափակելու համար բանկի հետ կապի եղանակն ընտրելու իրավունքին և բանկի կողմից կապի արագընթացությունն ապահովելու պարտականությանը: Նշված պարտականության չկատարումը իրավացիորեն պետք է հանգեցնի է հաճախորդի կրած վնասի փոխհատուցմանը: Հեղինակը նաև հիմնավորել է պայմանագրերում այնպիսի դրույթների ներառման անթույլատրելիությունը, որոնք բանկին թույլ են տալիս իր հայեցողությամբ սահմանափակել հաճախորդի՝ հաշվի վրա գտնվող միջոցները տնօրինելու իրավունքը կամ, առանց վերջինիս համաձայնության, գեղծարարության կասկածի դեպքում դրամական միջոցները փոխանցել ուղարկողի հաշվին: Նման դրույթների ամրագրումը հակասում են սեփականության

անձեռնմխելիության սահմանադրական սկզբունքին (էջեր 81-97, 5-րդ և 7-րդ դրույթներ):

Երրորդ գլխում՝ «Ֆինանսական ոլորտում պաշտպանության իրավունքը» վերտառությամբ հեղինակը տարանջատել է սպառողների իրավունքների պաշտպանության եղանակները, քննարկել բանկային ոլորտում կիրառելի պաշտպանության եղանակները (էջեր 108-128), անդրադարձել պաշտպանության և պատասխանատվության միջոցների հարաբերակցությունը (էջեր 128-130): Այս համատեքստում կարևոր են հետևյալ եզրահանգումները և առաջարկները.

- Բանկային ծառայությունների ոլորտում սպառողների իրավունքների պաշտպանության ինստիտուտի ուսումնասիրությունը բացահայտել է, որ այն իրենից ներկայացնում է միջոցառումների համալիր, որն ուղղված է իրավախախտումների կանխարգելմանը, դադարեցմանը, վերացմանը, խախտված իրավունքների վերականգնմանը: Չնայած պաշտպանության ձևերի ու եղանակների շուրջ առկա բանավեճերին և դատավարական օրենսդրության մեջ իրավունքի պաշտպանության ձևի սահմանման բացակայությանը, բացահայտվել է, որ պաշտպանության յուրաքանչյուր եղանակ կարող է կիրառվել որոշակի դատավարական կամ ընթացակարգային կարգով, որն անվանվում է քաղաքացիական իրավունքի պաշտպանության ձև (էջեր 108-110, եզրակացության 9-րդ դրույթ):

- Ներկայացված է բարոյական վնասի հատուցման ինստիտուտի կատարելագործման տեսլական, ներառյալ՝ հատուցման չափի որոշման օբյեկտիվ չափանիշների սահմանումը, հոգեբանական փորձաքննության ներդրման հնարավորությունը և հատուցման գումարը որոշելիս դատարանին հայեցողական լիազորությամբ օժտելը (էջեր 121-129, պաշտպանության ներկայացվող 5-րդ դրույթ):

Չորրորդ գլխում հեղինակը վերլուծել է իրավունքների պաշտպանության յուրիսդիկցիոն և ոչ յուրիսդիկցիոն ձևերի հասկացությունը, առանձնահատկությունները, քննարկել իրավունքների պաշտպանության արտադատական և դատական ձևերի առանձնահատկությունները, վերհանել գործող խնդիրները և առաջարկել համապատասխան լուծումներ (էջեր 131-165):

Ատենախոսության տվյալ գլխի գիտական արժեքը պայմանավորված է մի շարք առանցքային մոտեցումներով:

- Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվել «պաշտպանության հիբրիդային» և «թվային» ձևերի հայեցակարգերը: Նման դասակարգման մոդելի մշակումը վերացնում է պաշտպանության «ձև» և «եղանակ» հասկացությունների միջև առկա հայեցակարգային շփոթը: Այս համատեքստում պետք է առանձնացնել ատենախոսության ևս մեկ նորույթ, ըստ որի՝ առաջարկվում է բացառել դատարանի/արբիտրաժի՝ որպես պաշտպանության միակ մարմնի իմպերատիվ նշումը, և ամրագրել ինքնապաշտպանությունը որպես պաշտպանության ձև՝ ընդլայնելով ժամանակակից ձևերի ցանկը (ինքնապաշտպանություն, օպերատիվ ազդեցության միջոցներ, հաշտարարություն) (Էջեր 132-138, պաշտպանության ներկայացվող 6-րդ դրույթ):

- Հատկանշական են տարբեր համատեքստերում հեղինակի ներկայացրած դատողություններն այն մասին, որ սպառողը, որպես տնտեսապես և տեղեկատվապես թույլ կողմ, պետք է ունենա հատուկ դատավարական պաշտպանության կարիք: Այս սկզբունքի շրջանակներում ֆինանսական կազմակերպության վրա ապացուցման բեռը դնելը կնպաստի դատական պաշտպանության արդյունավետության ապահովմանը, կողմերի դատավարական հնարավորությունների հավասարեցմանը և սպառողների իրավունքների պաշտպանության ամրապնդմանը (Էջեր 49-51, 87-88, 160-165, պաշտպանության ներկայացվող 8-րդ դրույթ):

Ատենախոսության մեջ ձևակերպված եզրահանգումները լիովին համապատասխանում են հետազոտության առջև դրված նպատակներին ու խնդիրներին: Պաշտպանության ներկայացվող դրույթները ապահովում են ատենախոսության գիտական նորույթը, ունեն էական կիրառական նշանակություն իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության համար: Հետազոտության հիմնական դրույթները պատշաճ կերպով արտացոլված են հեղինակի գիտական հրապարակումներում և ատենախոսության սեղմագրում:

3. Նկատառումներ ատենախոսության առանձին դրույթների և եզրահանգումների վերաբերյալ

Բարձր գնահատելով կատարված աշխատանքը՝ հարկ ենք համարում ներկայացնել որոշակի բանավիճային նկատառումներ.

1. Պաշտպանության ներկայացվող դրույթների 1-ին կետում հեղինակը առաջարկում է «բանկային գործունեություն» հասկացության հետևյալ նոր սահմանումը. «բանկային գործունեությունն ընդգրկում է բանկերի ֆինանսատնտեսական ձեռնարկատիրական գործունեությունը, որն իրականացվում է «ներառելով գործողությունների, գործառնությունների և գործարքների համակցություն, որոնք ուղղված են շահույթ ստանալուն և հաճախորդների կարիքների բավարարմանը»: Ընդ որում, հեղինակը առաջարկը ներկայացրել է նաև գործնական կիրառման նպատակով՝ օրենսդրական բացը լրացնելու, օրենքի միանշանակ մեկնաբանության ապահովման և բանկային գործունեության նկատմամբ վերահսկողությունը դյուրինացնելու համար: Կարծում ենք, որ հասկացությունը լրամշակման կարիք ունի: Մասնավորապես՝ ըստ ներկայացված բնորոշման՝ բանկային գործունեությունը պետք է միաժամանակ ուղղված լինի շահույթ ստանալուն և հաճախորդների կարիքների բավարարմանը: Նշված երկու պայմանների միաժամանակյա առկայությունը սահմանափակում է հասկացությունը՝ դուրս թողնելով բանկային գործունեության այնպիսի ասպեկտներ, որոնք, օրինակ, իրականացվում են բանկերի միջև շահույթ ստանալու նպատակով և հաճախորդների կարիքների բավարարմանը չեն ծառայություն: Օրինակ՝ բանկերի միջև վարկային փաթեթների վաճառքը, երբ բանկերը միմյանց են զիջում հաճախորդների հետ կնքված վարկային պայմանագրերով պահանջի իրավունքները՝ միմյանցից շահույթ ստանալու նպատակով:

Նույն հասկացություն մեջ հեղինակն օգտագործում է «օրենսդրության և նորմատիվ իրավական ակտերի շրջանակներում» բառերը, որոնք առաջացնում են հակասություն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքով տրված բնորոշումների հետ: Մասնավորապես՝ օրենսդրությունն օրենսդրական և ենթաօրենսդրական

նորմատիվ իրավական ակտերի ամբողջություն է, հետևաբար նեռված է նորմատիվ իրավական ակտերի հասկացության մեջ:

Հեղինակը իրավացիորեն նկատում է, որ օրենսդրական մակարդակով տառացիորեն սահմանված չէ ուղղակի արգելք Բանկի կողմից ցպահանջ ավանդի տոկոսադրույքը 0% սահմանելու հնարավորության վերաբերյալ, և ամփոփելով աշխատանքը՝ առաջարկում է սահմանել նման արգելք (էջեր 51-56, պաշտպանության ներկայացվող 3-րդ դրույթի ա) կետ): Այս առումով ցանկալի կլիներ լսել հեղինակի պարզաբանումը՝ արդյո՞ք նման սահմանափակումը չի հակասում պայմանագրի ազատության սկզբունքին և ինչպե՞ս կազդի այն բանկերի միջև մրցակցության վրա:

«Բանկային գործունեություն» հասկացության սահմանման մեջ հեղինակն օգտագործում է «շահույթ», իսկ «բանկային ծառայություն» հասկացության մեջ «տնտեսական օգուտ» եզրույթները, որոնք միասնականացման կամ լրացուցիչ հիմնավորման կարիք ունեն:

2. Պաշտպանության ներկայացվող դրույթների 2-րդ կետում հեղինակն անդրադարձել է սպառողական վարկերի դեպքում սպասարկման վճարների համաչափ նվազեցման հարցին: Կարծում ենք, որ աշխատանքն առավել կշահեր, եթե հեղինակն ուսումնասիրության առարկա դարձներ նաև վարկային պայմանագրի ժամկետի ավարտից հետո ժամկետանց վարկի նկատմամբ սպասարկման վճարների շարունակական հաշվարկման պրակտիկային և դրանց վերաբերյալ առկա ՀՀ դատարանների մոտեցումներին:

3. Հեղինակը հիմնավորում է այն դրույթը, համաձայն որի՝ ավանդատուի կողմից ժամկետային ավանդի գումարի մասնակի վերադարձի պահանջ ներկայացվելու պարագայում պետք է կիրառվեն ցպահանջ ավանդների համար սահմանված տոկոսադրույքները: Միաժամանակ, իրավական որոշակիության ապահովման և հնարավոր իրավական վեճերի կանխարգելման նկատառումներով, հեղինակն առաջարկում է պայմանագրային մակարդակում հստակեցնել հաշվեգրվող տոկոսների չափը (էջեր 55-57, պաշտպանության ներկայացվող 3-րդ դրույթի բ) կետ): Այդուհանդերձ, գիտական հետաքրքրություն է ներկայացնում հեղինակի դիրքորոշումը հետևյալ հարցի

վերաբերյալ. արդյո՞ք հեղինակը դիտարկել է Կենտրոնական բանկի վերաֆինանսավորման դրույքաչափի կիրառման հնարավորությունը՝ որպես կողմերի շահերի հավասարակշռման այլընտրանքային գործիք:

4. Բանկային հաշվի պայմանների միակողմանի փոփոխման համատեքստում (էջեր 66-72 պաշտպանության ներկայացվող 4-րդ դրույթ) անհրաժեշտ է հստակեցնել հեղինակի մոտեցումը հետևյալ հարցերի շուրջ.

- Արդյո՞ք հեղինակը բանկային հաշվի պայմանագրի պայմանների միակողմանի փոփոխման հնարավորությունից բացի դիտարկել է վարկային պայմանագրերի էական պայմանների, օրինակ՝ անվանական տոկոսադրույքի, բանկի կողմից միակողմանի փոփոխման նպատակահարմարության հարցը,

- Իրավական ո՞ր կառուցակարգն է առաջարկվում որպես պայմանագրի փոփոխման նախապայման՝ հաճախորդի կողմից փոփոխությունների ակցեպտավորումը (համաձայնությունը), թե՞ պարզապես տեղեկացվածության ապահովումը (պատշաճ ծանուցումը):

- Արդյո՞ք Բանկի կողմից ծանուցման պարտականությունը պետք է համարվի պատշաճ կատարված, եթե հաճախորդը, պայմանագրով սահմանված ձևով ծանուցումն ուղարկվելուց հետո, սուբյեկտիվ կամ օբյեկտիվ պատճառներով չի ստացել այն: Ինչպե՞ս է հեղինակը պատկերացնում ծանուցումը չստանալու բացասական հետևանքների ռիսկի բաշխումը կողմերի միջև:

5. Առանձնակի գիտական հետաքրքրություն է ներկայացնում հեղինակի կողմից պաշտպանության ներկայացվող այն դրույթը, որով առաջարկվում է ընդլայնել Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը: Հեղինակը հիմնավորում է «սպառող» հասկացության ընդլայնման անհրաժեշտությունը՝ դրանում ներառելով նաև պոտենցիալ հաճախորդներին և ոչ առևտրային կազմակերպություններին (էջեր 145-147, պաշտպանության ներկայացվող 7-րդ դրույթ): Նշված մոտեցումը պահանջում է լրացուցիչ պարզաբանումներ՝ կապված դրա գործնական իրացման հնարավոր բացասական հետևանքների հետ.

- Արդյո՞ք հեղինակը հաշվի է առել սուբյեկտային կազմի նման ընդլայնման պարագայում այսպես կոչված «սպառողական էքստրեմիզմի» դրսևորումների հնարավոր աճը:

- Ինչպե՞ս է հեղինակը պատկերացնում Ֆինանսական հաշտարարի և իրավասու այլ մարմինների միջև գործառության կոմպետենցիայի սահմանազատումը:

- Ոչ առևտրային կազմակերպություններին դիմելու իրավունքի վերապահումը արդյո՞ք չի հանգեցնի ինստիտուտի նպատակային նշանակության փոփոխության և գործառնական ռեսուրսների անհամաչափ ծախսի:

6. Սպառողների իրավունքների պաշտպանության առումով առանձնակի կարևորվում է անհատական թերթիկի կիրառումը: Պրակտիկայում բազմաթիվ անգամներ հանդիպում ենք դեպքերի, երբ սպառողի կողմից ստորագրված անհատական թերթիկում նշված էական պայմանները, օրինակ՝ անվանական տոկոսադրույք, տույժ, տուգանք, սպասարկման վճար և այլն, հակասում են նույն սպառողի կողմից ստորագրված վարկային պայմանագրում նշված էական պայմաններին: Կարծում ենք, որ աշխատանքը գիտականորեն կշահեր, եթե հեղինակն անդրադառնար նաև անհատական թերթիկի իրավաբանական ուժին և ներկայացներ իր կարծիքը նման հակասությունների դեպքում պայմանագրի վավերականության հարցին:


Եզրակացություն

Ռոզա Ամիրի Ամիրովայի «Բանկային ծառայությունների ոլորտում սպառողների իրավունքների քաղաքացիաիրավական պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ Կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի N327 որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգի 6-րդ, 7-րդ, 8-րդ կետերի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.03 – Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային, միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային իրավունք, սոցիալական ապահովության իրավունք)

մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ




Անի Ալեքսանի Մուրաֆյան

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս Անի Ալեքսանի Մուրաֆյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ՏԵՂԱԿԱԼ՝

Ամսաթիվ 21.01.2026թ.



Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

